

Մշակույթի տօնը ուխտի, միաւորման, ինքնագիտակցութեան տօն է: Օշականի գերեզմանին սուրբ աճիւններուն ափ մը խունկ խնկարկելու օր...
Հոկտեմբեր 28-ին Հ.Բ.Ը.Միութեան Զարուկեան Վարժարանի աշակերտութիւնը Պապայեան սրահին մէջ, գլխաւորութեամբ Հայ ուսուցչուհիներու եւ մասնակցութեամբ ծնողներու, բարեկամներու, հիւրերու նշեց այդ կարելոր տօնը: Դպրոցին տնօրէնուհի Տիկ. Լիւսի Յոբեան բացման խօսքին մէջ շնորհաւորեց Հայ Մշակի, Հայ Ուսուցչի, Հայ Մշակութային գործիչներու տօնը, իսկ Տիկ. Կատարիճէ Մէնէշեան Հայ Ուսուցչին պատգամը փոխանցեց Հայ ապրելու, բարոյատեւելու ամենակարելոր միջոցն Մշակութային արժէքներուն կառչիլն է: Ապա Զրդ, Յրդ, Կրդ դասարանը անթերի, հմտօրէն եւ առանց ընթերցելու ներկայացուց "Պատմական ակնարկ Հայ Մշակույթին", ցուցադրուած համապատասխան Հայկական մատենաներու, ձեռագործերու եւ երաժշտական գործիքներու հաւաքածոյով:

Մանկապարտէզի ծաղիկ դասարանը երաժշտական բեմականացումով ներկայացուց Կենդանիներու Ժողով, հրաշալի եւ հետաքրքիր կատարողութեամբ, իսկ Կոկոն դասարանը "Պուլ-պուլ Մկնիկ"-ը երաժշտական եւ պարային կատարումներով, որն իր համով ու բոյրով համեմեց մանկապարտէզի գեղարուեստական յայտագիրը, իսկ Բողբոջ եւ Կոկոն դասարանները "Հայոց Լեզուն", "Փոքրիկ Մետրոպ" եւ "Մեծ եմ Ես", արտասանութիւնները խանդավառեց հանդիսատեսին: Յայտագրի ամփոփումն էր, երգչախմբային ճիշդ կատարումներու 6-նեակ, որոնց անզուգական եւ գերազանց կարելի է համրել Արեգ Լուսինեանի "Այբուբենը մեր Հայոց"-ը:

Հանդէսի փակման Տիկ. Յոբեան շնորհաւորեց ուսուցչական կազմին Հայ ուսուցչի տօնին առիթով, նուիրելով ծաղկեփունջեր, իսկ դպրոցիս ծնողաց յանձնախումբը Հայկական չէօրէկներով եւ պանիրով հիւրասիրեց բոլոր հիւրերուն: Հոգեպարար, լուրջ, ուրախ եւ խանդավառ հեռացան հանդիսատեսները, մեծ հաճոյքով սպասելու յաջորդ ներկայացումներուն:

Վերժիկ Աբրահամեանց